ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/211

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Էներսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Մաթևոսյանի (Լիազորագիր, տրված՝ 25.12.2018թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23784-18 գրությամբ «Էներսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 14.12.2018թ. թիվ 01/882-18 գրության հիման վրա, 20.12.2018թ. թիվ 27/26-3/23784-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էներսիս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Էներսիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Էներսիս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար 2018թ. նոյեմբերի 14-ին կազմակերպված «ԵՋԷԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/67» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) և գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Տեղյակ լինելով, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություն, www.taxservice.am կայքի միջոցով ներկայացվել է հարցում, որից հետո ՀՀ ՊԵԿ-ից էլեկտրոնային եղանակով ստացվել է հարկային պարտավորությունների վերաբերյալ հարկ վճարողի անձնական հաշվից քաղվածք: Ստացված քաղվածքի համաձայն՝ 16.11.2018թ. դրությամբ Ընկերությունը որպես դեբետային մնացորդ ավելացված արժեքի հարկի մասով ունի 13 218 606 ՀՀ դրամ, միասնական հաշվում՝ 190 089 ՀՀ դրամ վճարված գումար: Այսինքն նշված տեղեկանքից ոչ մի կերպ չի երևում, որ Ընկերությունն ունի որևէ ժամկետանց հարկային պարտավորություն: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը, ստացված քաղվածքի համաձայն, չունի ժամկետանց հարկային պարավորություններ, որոշում է կայացրել մասնակցել վերը նշված գնման ընթացակարգին:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ՊԵԿ հարցում է կատարվել և 23.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էներսիս» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 19 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է գնային առաջարկի 1 տոկոսը: Ինչը, սակայն, չի երևում Ընկերության՝ հարկ վճարողի անձնական հաշվի քաղվածքի մեջ:

Դրանից հետո, Պատվիրատուն 26.11.2018թ. ժամը 11:30-ին Ընթացակարգի հաղթող մասնակից «Էներսիս» ՍՊԸ-ին որոշել է տրամադրել մեկ օր՝ հարկային մարմնի կողմից ներկայացնել ֆինանսնական չափորոշիչի վերաբերյալ տրված տեղեկանքը և այդ մասին էլ. փոստի միջոցով տեղեկացրել է Ընկերությանը: Նույն օրը վերը նշված տեղեկանքը

ստանալու համար հարցում է ուղարկվել ՀՀ ՊԵԿ: Սակայն նշված հարցման պատասխանը Ընկերության կողմից ստացվել է 28.11.2018թ., այսինքն՝ ավելի ուշ քան մեկ աշխատանքային օրը: Ստացված տեղեկանքը նույն օրն ուղարկվել է «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ին, սակայն Պատվիրատուն 29.11.2018թ. ժամը 11:00-ին, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում որոշում է կայացրել «Էներսիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է մերժել «Էներսիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/211 ընթացակարգի շրջանակներում 25.12.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչ՝ Ա. Մաթևոսյանի մասնակցությունը, ով մնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.12.2018թ. թիվ 01/882-18 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար 14.11.2018թ. կազմակերպված «ԵՋԷԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/67» ծածկագրով հրատապ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Էներսիս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Օրենքով սահմանված կարգով Պետական եկամուտների կոմիտե կատարվել է հարցում՝ Ընկերության ՀՀ պետական բյուջեի նկատմամբ վերահսկվող եկամուտների մասով: Ի պատասխան Պատվիրատուի կողմից կատարված հարցմանը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Էներսիս» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 19 000 (տասնինը հազար) ՀՀ դրամ ժամկետանց հարկային

պարտավորություն, որը գերազանցում է մասնակցի կողմից առաջարկված գնի մեկ տոկոսը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/211 ընթացակարգի շրջանակներում 25.12.2018թ. ժամը 11:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/211 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/211 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԵՋԷԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/67» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.11.2018թ. հայտ է ներկայացրել «Էներսիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2018թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էներսիս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 23.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էներսիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 19 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 11:00-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էներսիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23784-18 գրությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 14.12.2018թ. թիվ 01/882-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Էներսիս» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպվել է «ԵՋԷԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/67» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.11.2018թ. հայտ է ներկայացրել «Էներսիս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 7 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՋԷԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/67» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.11.2018թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էներսիս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 23.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Էներսիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 19 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2018թ. ժամը 11:00-ի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էներսիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 23.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էներսիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 16.11.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 19 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի չեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ***16.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների,***

սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Էներսիս» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով 16.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «Էներսիս» ՍՊԸ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ «Էներսիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի

ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ «Էներսիս» ՍՊԸ-ն բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի նշված հանգամանքը հաշվի առնելով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էներսիս» ՍՊԸ-ն «ԵՋԷԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/67» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23784-18 գրությամբ «Էներսիս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00259573) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ